

ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՆԿ

Տարեկան գինը 10 բուրլ, կես տարվանը 6 բուրլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:
Օտարաբաղադրացիք դիմում են սուղափի
Тифлис. Редакция. Москва.

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):
Յարտարարութիւնը ընդունուած է ամեն լիպով:
Յարտարարութիւնների համար վճարում են
խորհրդանշար բառին 2 կոպեկ:

«ՄՇԱԿ» կես տարվայ բաժանորդագրու-
թիւնը սկսված է: Մեր լրագրի վեց ամս-
վայ գինը 6 բուրլ է:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Մի օրինակելի ազգութիւն:—Ներքին ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ: Նամակ երկանից: Նամակ խմբագրին:
Ներքին լուրեր:—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Մեր-
բիւ: Նամակ Թիֆլիսայից: Արտաքին լուրեր:—
ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ:—ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ:—ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ:—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ: Խամայի
Մէլքոնթիւններ:

ՄԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԱԶԳՈՒԹԻՒՆ

Վրացիները, մեզ հայերիս, իրանց հա-
մար օրինակելի ազգ են համարում:
Բայց եթէ մենք ինքներս մեզ խստու-
թեամբ քննադատենք, շատ միջիմարական
եղբակացութիւնների չենք հասնի:

Մենք հայերս ունենք մի բազմաթիւ
երկրագործական դասակարգ, բայց այդ դա-
սակարգը անդադար չգտում է գաղթել
գիւղերից դէպի քաղաքները, Թողնել վարու-
ցանքը և հողային աշխատանքները ու
պարապել վաճառականութեամբ և ման-
րավաճառութեամբ:

Մենք ունենք զօրեղ առևտրական դասա-
կարգ, որ փոխանակ օրուտ բերելու ազգին,
ոչինչ համբարաշխական զգացմունք չունի
դէպի ազգի մեծամասնութիւնը և ամեն

միջոց է դորձ դնում հարստահարելու, կե-
ղեքելու երկրագործ, բանուոր, աշխատող
դասը:
Հայը ունի իր անկախ, ազգային եկեղե-
ցի, բայց այդ եկեղեցու ազէտ պաշտո-
նեաները վրայ, նրանց տրած զեղծութիւնների
վրայ անընդհատ և անվերջապառ զան-
գասներ են լսվում:

Հայերը ունեն մի գեղեցիկ և հարուստ
մայրենի լեզու, բայց մեր օտարացած ին-
տելիգենցիան, որով մենք պարծենում ենք,
ամեն միջոց է դորձ դնում որպէս քի մո-
ռանայ իր մայրենի լեզուն, հարածում է
նրա գործածութիւնը թէ իր ընտանիքում
և թէ հասարակութեան մէջ:
Բազմաթիւ հարուստներ ունի հայոց հա-
սարակութիւնը, բայց այդ հարուստները
անտարբեր են դէպի իրանց ազգի կարեւ-
րները: Իսկ եթէ լինում են նրանց մէջ այլ
և այլ բարեգործական և ազգային նպա-
տակներով մեծ գումարներ կտակողներ,
այդ կտակված գումարները շատ շուտով
կորչում, անհետանում են շահասեր կտակա-
կատարների ձեռքում և մեծ մասամբ իրանց
նպատակին չեն հասնում:

Հայը պարծենում է իր բազմաթիւ դրպ-
րոցներով, հայը հռչակված է իր ձգտու-
մով ամեն տեղ ուսումնարաններ հիմնելու,
հայի կենսի իդէալն է դպրոցը, բայց այդ
բազմաթիւ դպրոցներից, ամենաստորից մին-
չև ամենբարձրը, ոչ միքը փոքր ի շատե-
բարեկարգ դրութեան մէջ չէ: Անդադար

մէջն էին, պաշտպանում էին նրան: Բերդի ութն
աշտարակներից չորսը հայերի պաշտպանութեան
ներքոյ էր, իսկ մնացածը պաշտպանում էր ինքը
Ջաւառ-խանը:
Պաշարումը տեղեկ երկար, աւելի քան չորս ա-
միս: Ուստ, Թուրքը, վրացի և լեզգի զօրքերը, ա-
հազին քան սկսութեամբ չըժպտատել էին բերդը և
անդադար յարձակումներ էին դործում, բայց
պաշարվածները քաղցութեամբ պատասխանում էին
նրանց: Վերջը Հերակի իշխանը անձարացած մին
գաղտնի պատրաստարարութիւն ուղարկեց Ջաւառ-
խանի մօտ, յայտնելու նրան, եթէ Մէլքե-Մէլքե-
մին իր ձեռքը կը տայ, դրանով ամեն ինչ կը
վերջանայ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԽԱՄՍԱԹԻ ՄԵԼԻՔՈՒՆԻՆՆԵՐԸ

XXXIII.

Վրաց Հերակի իշխանը չէր մտապել Թիֆլիսի
աւերումը Մէլքե-Մէլքեմին և Ջաւառ-խանի ձեռ-
քով: Եւ չէր բերդի իրաւիք-խանը նոյնպէս չէր մո-
ռացել, որ իշխակ երկու անձինքը, առաջնորդելով
Աղա-Մամադ-խանին, պաշարեցին իր բերդը և
անհաղթ քանակ պատճառեցին: Ուստի երկուսն
էլ միարարակեցին, կամեցան իրանց այդ ոսկերի
թշնամիները վերջնական լինել:
Համարեա կոմս Ջաւառի Գերբէնը տիրելուց
մի ամիս յետոյ (1796—ապրիլ ամսում) Հերակը
վրացի և վարձված լեզգի զօրքերով, այլ և իր
հետ վեր աւելելով Թիֆլիսում գտնված ուստաց
զօրքերի մի մասը, իսկ իրաւիք-խանը Ղարաբա-
ղի հայ և թիւրք զօրքերով պաշարեցին Գանձակի
բերդը: Նրանց օգնութեան հաստ և Ավարիայի
Օմար-խանը:
Իրաւիք-խանի զօրախումբը մէջ գտնվում էր
Մէլքե-Ռուստամը, բացի նրանից, Ղարաբաղի
միւս մէլքեներից ոչ զք չը մասնակցեց խա-
նի արշաւանքին: Այդ փոփոխամիտը, որպէս տե-
սանք XXXVII գլխում, իր կնոջ պատճառով թըշ-
նամացաւ խանի հետ, բայց Մէլքե-Մէլքեմին դէմ
պատերազմելու համար կրկին հաշտուեցաւ: Նա
վարդապետութիւն ունէր Մէլքե-Մէլքեմինի
հետ, որովհետեւ այդ վերջինը, որպէս ցոյց
տուրքը XXXVI գլխում, մի գաւազդութեան համար
հրացանի բռնել տուեց Մէլքե-Ռուստամի կողմը
և փխտային:
Գանձակի բերդը մէջ իր զօրքերով գտնվում
էր Մէլքե-Մէլքեմին, առաջին Ջաւառ-խանի մը-
տերիւր բարեկամը: Բացի նրանից, Գանձակի հայ
մէլքեները իրանց մարդիկներով նոյնպէս բերդի

զանգառներ են լսվում թէ այս ինչ դպրո-
ցում ուսումը շատ վատ է գնում: այն ինչ
դպրոցի ուսուցիչները ամիսներով իրանց
ոտնիկը չեն ստանում, մի երբորդ ուսումնա-
րանի մայր-գումարը կերել են հոգաբար-
ձուները կամ երեցփոխանը և դպրոցը շու-
տով կը փակվի, չորրորդի մասին լսում ենք
թէ հոգեւոր իշխանութիւնը խել է նրանից
նրա գոյութեան միակ աղբւրը, դպրոցա-
պետական կալուածքը, և այլն:

Հայերը ունեն ազգային մամուլ, բայց
լրագիրներից և ամսագիրներից ոչ միքը
ստեղծական գոյութիւն ունենալ չէ կարող
ոչ թէ միայն այն պատճառով որ սակաւ
բաժանորդներ ունի, բայց և այն պատճա-
ռով որ բաժանորդ գրվողները և խօսքով
համակրողներն էլ, իրանց բաժանորդավճա-
րը չեն հատուցանում: Խմբագրութեանը և
մշտական ապառիկների տակ խեղդող մա-
մուլը ապարդիւն կուզի մէջ ի զուր սպա-
ռում է իր օյժերը:

Հայը ապրում է մի հարուստ երկրի մէջ,
բայց փոխանակ պարապելու երկրի ան-
սպառելի քանակ հարստութիւնների ար-
դիւնաշահութեամբ, ամեն միքը մեզանից
ձգտում է պետական ծառայութեանը և պե-
տական պաշտօնների ձեռք բերելուն:

Վերջապէս հայը մեծ շնորհ ունի հիմնել
այլ և այլ ընկերութիւններ, բայց պահպա-
նել իր հիմնած ընկերութիւնները ընդու-
նակութիւն չունի: Կը տեսնէք որ հիմնվե-
ցաւ փառաւոր կերպով մի որ և է բարե-

գործական, Թատրոնական, գրականական
կամ մի այլ ընկերութիւն,—բայց նրա հի-
մնվելուց յետոյ անցաւ մի քանի ամիս և
զուք ընկերութեան գոյութեան մասին այլ
ևս ոչինչ չէք լսում:

Հայը դէպի ամեն բան շուտ է վառվում,
բայց և նոյնքան շուտ է սառչում: ամեն
բանից: Հայը ոչինչ բանի մէջ տակունու-
թիւն չունի:

Եւ ահա այն ազգութիւնը, որին նախա-
ձում են վրացիները, որ նրանք իրանց
համար օրինակելի են համարում:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԵՑ

Յունիսի 18-ին
Անցեալ մայիս ամսի 22-ին, «Մշակի» 79-դ
համարի «Լուսաւորութիւն մահմետականների մէջ»
վերնագրով առաջնորդող յօդուածում զուք յայտ-
նել էիք մի բարի և օգտակար միտք—այն է՝ հրա-
տարակել Անդրկովկասում Թուրքերին լեզուով մի
ամսագիր, որի համար աւելի յարմար գտնում էք
ինձ:

Համակրելով Կ. Պոլսում հրատարակվող հայե-
րէն տառերով մի քանի լրագիրների, զուք խոր-
հորդ էք տալիս նոյն փորձը մեզ մօտ: այսինքն
Անդրկովկասում փորձել:

Այդպիսի մի ժողովրդական ամսագիր հրատա-
րակել մանաւանդ երեւանում, նայելով թէ մեր
Թուրք ազգաբնակիչները որքան անտարբեր է

յետ էին դառնում: Բայց երկու քաջերն են ի-
րանց յանդուգն յարձակումների զօրը դարձան,
Թիւրի Արզումանը գնտակի հարուստը ստացաւ
Գանձակի այգեստանի մէջ տեղի ունեցած կռի-
ւում, իսկ Գալի-Մահրաբան, որպէս նիկարաղե-
ցիք XII գլխում, սպանվեցաւ Գանձակի զերբըմա-
նում մէջ: Այդ քաջերի կորուստը Մէլքե-Մէլքե-
մինին սաստիկ ցաւ պատճառեց:

Երբ ամիս անցաւ, բայց բերդը դեռ աներկիւղ
որ չը նայած դիւի աւերով մարտին դեռ պահ-
պանել էր մարմնի փրութիւնը և սրտի աշխուժե-
թշնամու բանակից բաժանվելով, անկատակ
թշնամու մեջ էին, որ դռնուած էին հայերի
պաշտպանութեան ներքոյ: Այդ ձեռքունու ներկա-
յութիւնը, կարծես, մի դիւրեմական զօրութեամբ աղ-
ղեց աշտարակի հայ պահակների վրայ, որոնց թիւը
մի քանի հարիւր հոգի էր, և գիւղերը բոլորն էլ
ապստամբուեցան, աշխատում էին բաց անել
թշնամու սուղև բերդի դռները: Մէլքե-Մէլքեմին
այդ լսելով թողեց իր բռնած դիրքը, շտապեց
զուգելու ապստամբութիւնը: Գիւղերային խռովու-
թեան մէջ նա դիտակի հարուստը ստացաւ: Նրան
վիրաւորված տարան Ջաւառ-խանի պալատը: Եւ
բունին բռնուեցաւ: Ո՞ր էր այդ շարագործը:

Կա խորապէ կաթողիկոսի հայր Ապրէս-աղան
էր: Նրա օժեւոյ որդին դաւաճանութիւն գործեց
Ղարաբաղի բոլոր հայ մէլքեների դէմ, և նրանց
թղթերը բռնելով, մատնեց իրաւիք-խանին, և
Ղարաբաղի կործանման պատճառը դարձաւ:
Այժմ ձեռնուրի հայրը նոյն եղևնագործութեան
դերը կատարեց: Նրա փեսան *), Մէլքե-Ռուստա-
մը, թշնամու բանակի մէջն էր, կամեցաւ նրան
և իրաւիք-խանին մի մեծ ծառայութիւն անել:
Նոյն գիւղերայ առաւօտեան պահուս Ջաւառ-
խանը Ապրէս-աղայի դուրսը կարել տուեց և որ-

պէս ընձայ ուղարկեց թշնամու բանակը նրա փե-
տայ Մէլքե-Ռուստամին: Իսկ ապստամբներից շա-
տերը նոյնպէս պատժուեցան:

Մէլքե-Մէլքեմին, այդ վիրաւոր առիժը, ինձամ-
վում էր Ջաւառ-խանի պալատում: Երբորդ օրում
նա վախճանուեցաւ: Բայց Ջաւառ-խանը երկու
ամբողջ շաբաթ նրա մարմինը պահեց իր սան-
մէջ, բոխչը գնում-գալիս էր, իր ժամանակին
նրա սննակը ընթրիք և ճաշ էին տանում, և ա-
մեն օր Ջաւառ-խանը ուրախութեամբ յայտնում
էր հայոց զօրքերին, թէ շուտով Մէլքե-Մէլքեմին
բոլորովին առողջացած գուցա կը գայ: Կրանով
խանը կամենում էր պահպանել հայոց զօրքերի
կոտորը, որպէս զի իրանց իշխանի մահը լսելով
չը վախովին, մինչև ինքը թշնամու հետ գործը
վերջացնէ:

Գանձակի բերդի պաշարման շրջանը ամիսը
լրանալու մօտ էր, կրք Ջաւառ-խանը, առանց
որ և էից զիջում անելու, հաշտուեցաւ իր թշնամի-
ների հետ: Իրաւիք-խանը հեռացաւ դէպի Ղա-
րաբաղ, Հերակը գնաց Թիֆլիս, իսկ Օմար-խա-
նը դէպի Գաղաթան: Մէլքե-Մէլքեմին մահը իմա-
ցան նրանք այն ժամանակ միայն, կրք հաշտու-
թեան պայմանները արդէն կնքված էին:

Չը նայելով, որ Թիֆլիսը աւերակ դարձնուց
յետոյ Մէլքե-Մէլքեմին փոքր ինչ կորցրել էր իր
համարումը հայ հասարակութեան աչքում, բայց
Ջաւառ-խանը, յարգելով իր հանդուցեալ բարեկա-
մի յիշատակը, ուսադուութիւն չը դարձրեց հայերի
դժգոհութեան վրայ, և նրա մարմինը հանդիսաւոր
կերպով թաղել տուեց Գանձակի մայր եկեղեցու
տաճարի աջակողմեան խորանի մէջ: Նոյն եկե-
ղեցու գաւթում ամիսովիցեան Գալի-Մահրաբայի
(Աւագ վարդապետի) և Թիւրի-Արզումանի մար-
մինները:

Ջաւառ-խանը իր հոգաբարձութեան ներքոյ ա-
ռեց Մէլքե-Մէլքեմին մեակ որդի Մէլքե-Ամադ
Իւրին: ...

* Ապրէս-աղայի աղջիկը, Վարդ-խանի դուստր,
Մէլքե-Ռուստամի կինն էր:

գէտի տպագրական գործը, հազիւ թէ կարելի լինէր հնչողութեամբ գրուի բերել ևս սրանով չեմ ցանկանում ասել, որ բոլորովին հակառակ եմ այդ բարի գործի ձեռնարկութեանը և թէ չեն գտնուի մարդիկ, որոնք չէին համակրի այդ գործին... ոչ, այլ սրովհետև թուրքերի մէջ նրանցից շատ քիչ մասն անգամ կարող գիտէ: Հրատարակել մի ամսագիր ուղղակի հայերէն տառերով, ասել է թէ հրատարակ միայն հայերէն տառերով և տարածել իրանց կարգադրած միտքը թուրքերի մէջ և միանգամայն հաւատարմ, որ թուրքերը, տեսնելով այդ, կը սկսեն սովորել հայ տառերը և կը ստանան հայ տառերով թուրք ամսագիր նշանակէ սխալմունք կը լինէր սկզբից, որովհետև ամենից առաջ հարկաւոր կը լինէր, որ նրանք այդ տեսակ լրագրի օգուտը հասկացած լինէին, այնուհետև յոյս կար, որ հայ տառերով տպուած թերթը նրանք չարհամարէին ասանալ և չտեսնէին, չլրմանի ախ դարձի:

Հակառակ դէպքում, տարածել այդ լրագիրը պարտեւրէն տառերով միանգամայն կը նշանակէր ժամակաճառութիւն անել և բոլորովին ընդդէմ լինել ձեր յայտնած կարծիքին:

Իմ կարծիքով մի միջոց է մնում միայն այդ նպատակին հասնելու համար, այն է՝ հրատարակել մի ամսագիր արդիւնաւոր թուրքերէն բարբառով քաճանելով մի և նոյն ժամանակ թերթը երկու մասի, որոնցից առաջինում պարունակված նութերը տպագրված լինէին թուրքերէն տառերով, իսկ երկրորդում մի և նոյն նութերը հայերէն տառերով: Թէև այդ ձևով հրատարակութիւնը դարձեալ խստաբար, ժամակաճառութիւն կը համարուի, քանի որ մի և նոյնը կը տպագրվէր երկու անգամ, թէև առանձին տառերով, այնու ամենայն, նայելու մենք տեսած կը լինէինք հետեւեալ օգուտը: առաջինը՝ բաժանորդները թուրքերէն լինելով, ինչպէս հայերը, նոյնպէս և թուրքերը, երկրորդը թուրքերէն տեսնելով մի պարբերական հրատարակութիւնը մէջ իրենց տառերի անմարս դժուարութիւնը և մի և նոյն ժամանակ հայ տառերի աւելի պարզ լինելը և գուցէ լսելով հայ տառերի հնչող սովորելու եղանակը յակամային հետաքրքրված ու մինչև անգամ ստիպված կը լինէին հետզհետեւ ուսումնասիրելու հայկական տառերը, որոնց միջոցով աւելի շուտ և հեշտ կերպով կը տարածվէր նրանց մէջ լուսնորոշութիւնը:

Ան ապա է իմ կարծիքը և շատ ցանկալի կը լինէր, որ ձեր բարեհաճ ուղարկութիւնը դարձ-

րած լինէր այս առարկայի վրա և եթէ բարեբաղդաբար համակրութիւն կը գտնէր այս յայտնած միտքը թէ ձեր և թէ հայ հասարակութեան կողմից, ինչ համար պարտականութիւն կը համարէի ձեռնարկել մի այդպիսի հրատարակութեան, խնդրելով օգնել ինչ թէ գրաւոր և թէ նրաբան միջոցներով:

Վասակ Մարտիրոսյանց

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Մեծ-Ղարաբաղիս, 19 յունիսի

Այլ քանսիրտագոյի անստաւապետ պ. Կուզմինի նամակի մէջ, որ տպուած էր «Մշակի» № 102 մէջ, զարաբերուցներ չեմ ունեցած իր գործի վերաբերութեամբ, ակնարկում է, թէ միջոց անգամ պարտականութիւններ չունենալու վրա, մեղադրելով ինչ ընտելիչների պաշտպանութեան մէջ, որպէս թէ երբ նա կարանաւորում է նրանց մօտ իրողները, եւ ուղարկում եմ նրա մօտ իմ խոհարարին: Արդեօք ուղարկում էի եւս պ. Կուզմինի մօտ իմ խոհարարին, եւ լաւ չեմ յիշում, բայց եթէ մարդ ուղարկած էլ լինէի, այդ երեք այն ժամանակն էր լինում, երբ նրա բացակայութեամբ նրա անցյալները բոլորովին անկասկած կերպով կարանաւորում էին Հաջի-Վարդիկների անունները, որ նրանք բերած էին 1օտու մի այլ անստաւապետութիւնից այնտեղի անստաւապետից ատացած տունակի գործութեամբ, կամ այն ժամանակ երբ զարաբերուցներն ամենակ չէին տալիս դուրս բերելու վաճառման համար նոյն իսկ իրան մօտ կտրած բարդի ծառերը: Անցնելով զարաբերուցներին իմ ցոյց տուած պաշտպանութեան հարցին վերջին գործի առիթով, եւ ամենին չեմ կամենում հերքել այդ իրողութիւնը, քանի որ համարում եմ նրանց կատարելագոյն արդարացի և ահա ինչ խորհրդածութիւնների հիման վրա: 1) Ինչն պ. Կուզմին չէ մերժում այն հանգամանքը, որ այն հողի իրաւունքը որ վարում էին զարաբերուցները, ինչն պ. Կուզմին բացառապէս է վայելում, որպէս անստաւապետի տուած բաժնին: Եթէ այդ այդպէս է, որինն ինչպէս է գնահատվում պ. Կուզմին օրէնքի առջև մի որ և է այլ մասնաւոր մարդուց և ինչ հիման վրա նա իր անձնական շահերը պաշտպանում է արժեքի միջոցներով, անստաւապետների օգնութեամբ, դիմելով կօպիտ, գործին բոլորովին աւելորդ ֆիզիկական ոյժին: Այն հանգամանքը միայն, որ այդ հողը արբոնի է, ոչ մի կերպով չէ կարող արդարացնել նրա

գործողութիւնը առողջ դատողութիւն ունեցող մարդկանց, օրէնքի և դատարանի առջև: 2) Իրան պ. Կուզմինին յայտնի է, որ հողը, որի մասին խօսք է լինում, աւելի քան երեք տարվայ ընդհանրապէս որ հաստատվում է պ. Կուզմինի նախորդների ցուցումներով և իրան պ. Կուզմինի յայտնութեամբ տեղիս հաշտարար դատարանում, որտեղ նա դատ էր սկսել զարաբերուցների դէմ, որովհետև նրանք անցեալ տարի վերել էին հողը: Ընդունելով, առժամանակ, որ վերաբերուցները այդ հողի վայելելը անարդար է, ուստի հարց է առաջարկվում, ինչպէս պ. Կուզմին պէտք է վերականգնեցնէ իր իրաւունքը: Միթէ նա այդ պէտք է անէր ֆիզիկական ուժի և անստաւապետների օգնութեամբ, և ոչ թէ օրինական ձևապարտով, որ եւ կարծում եմ, յայտնի է նրան: Ինչն պ. Կուզմին չը սպասեց այն գործի վերջնապաշտ, որ ինչքան է սկսել և չուզեց լսել վերջին խօսքը դատարանի վերջին կայարանի, իսկ դիմեց ոյժին: Արդեօք չէր զգում նա որ ամենքն այն աստիճան ներառու չէին վերաբերվի դէպի նա, ինչպէս հաշտարար դատարանը և որ գործի ընդունելու շարունակութեան ժամանակ հանդէս կը գան մի քանի հանգամանքներ, որոնք շատ ձեռնառու չեն լինի անստաւապետի շահերի համար: Չը գիտէ նա արդեօք որ նա վայելում է ոչ թէ 30 դեմիտրին հող, ինչպէս այդ պահանջվում է անստաւապետ կանոնադրութեամբ, այլ շատ աւելի: Չէր զգում նա արդեօք որ եթէ կը ամեն էլ ընտելիչների դէմ իր ունեցած վէճը, այն ժամանակ վարչութիւնը անշուշտ նրա արածները վրա ուղարկութիւն կը դարձնէ: 3) Եւ ամենին չեմ հաւատում պ. Կուզմինի յայտնութեանը որ ընտելիչները նրա դէմ ընտելիչներ գործած լինելու, իսկ ընդհակառակն եմ գտնում, որ նա ինչն թէլ ստեղծ իրան ընտելիչներ գործել ընտելիչների վրա: Եւ կարծում եմ որ այդ կը ստուգվի ընտելիչների ժամանակ: Ի դուրս պ. Կուզմին իրան օրբում է յոյսով, որ նրա յայտնութիւնը կատարելագոյն ստուգվեցաւ: Առժամանակ հարցրած եմ եղել գործի վերաբերութեամբ միայն իրան ստորագրեալ անձինք, որոնք չէին կարող դուրս գալ անստաւապետից նրանց զօրաբան գործողութիւնների սահմանից: Իսկ գործին կատարելագոյն անկողող վկաների խօսքերը դեռ լսելու ենք:

Այլ քանսիրտագոյի զաւառապետի օգնական Փիրուսով

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մենք ստացանք Ղարաբաղից Այլ քանսիրտագոյի զաւառապետի օգնականի պաշտօնական հերքումը անստաւապետ պ. Կուզմինի նամակի: Տպում ենք ներկայ համարում պօլիցիական վարչութեան ներկայացուցչի այդ հերքումը, որ ի հարկէ, մեծ նշանակութիւն ունի գործը պարզելու համար: Պ. Կուզմին այլ ևս չէ կարող մեղ մեղադրել որ մեր ձեռքում ունեցած դոկումենտները թերի են:

Տպում ենք «Մշակի» ներկայ համարում պ. Վասակ Մարտիրոսյանի նամակը Երևանից: Շատ ուրախ ենք որ մեր առաջարկութիւնը համակրութեամբ է ընդունել պարոնը: Յանկալի կը լինէր որ թուրքերէն լրագիր հրատարակելու ձեռնարկութիւնը արդողէր:

Մեզ հաղորդում են որ կիրակի, յունիսի 13-ին եղաւ հայոց սիրողների ներկայացում Հաւաքարում: Խաղաղին «Այլ քանսիրտագոյի» և «Կայալ Ղարաբաղ» պիէտաները: Գարնիճը որ զօրադապէս փոքր էր, լի էր բազմութեամբ: Նոյն երեկոյ եղաւ և երգեցողութիւն:

Շնորհակալութեամբ ստացանք ՄՕՍԿՎԱՅԻՑ այդտեղի աւագ քահանայ Յակոբ Սուրենեանցի թարգմանած «Ներկար կեանք և նրա պայմանները» վերնագրով գիրքը: Գրքի հեղինակն է բժշկապետ Նուարթո: Հայերէն թարգմանութիւնը շատ գեղեցիկ է և հասկանալի: Տխր շատ մաքուր է: Գիրքը տպուած է Մոսկովայում ներկայ 1882 թ.ին: Գրքի փոխնախագիտութիւնը բժշկական է, կամ աւելի լաւ է ասել առողջապահական է, գրված է գրաւիչ, հասկանալի ոճով: Նուարթո բժիշկը կարծում է որ մարդը եթէ կամենում է երկար պահանջ իր կեանքը, չը պէտք է ի չար գործ անի սեռական յարաբերութիւնները, որոնք զլիաւորապէս և ծերացնում են մարդուն, ամենից աւելի սպառում են նրա թէ ֆիզիկական և թէ մտաւոր ոյժերը: Առժամանակ մտաւոր և մտաւոր ու ֆիզիկական անընդհատ աշխատանքը ամենից լաւ միջոցներ են մարդու սեռական յարաբերութիւնները կանոնաւորելու համար: Խորհուրդ ենք տալիս մեր հայ ընթերցողներին առնել և կարդալ այդ վերին աստիճանի հետաքրքիր, գրաւիչ և օգտակար գիրքը: Գրքի գինը մենք չը գտանք գրքի վրա նշանակված: Կարծում ենք որ «Ներկար

նշանագրել էր իր որդու համար տեղացի երեւելի ազնուական (հասնէի) կրտսեր աղջկան, դեղեցիկ Ռէհանին: Երբ Մէլիք-Մէլիքում մահից յետոյ Ջաւադ-խանը հարսնախնամը ուղարկեց թիֆլիս Ռէհանին բերելու, նրա հայրը փոխանակ գեղեցիկ Ռէհանին տալու, տուեց երեք քրոջը, թամարին, որը բաւական տղեղ էր: Այդ զօրաւոր ամուսնութեան պատճառով, Մէլիք-Աթմա, Իւր, երկար չպարեց, նա մեռաւ երիտասարդական հասակում, թողնելով մի աղջիկ միայն Սըհար-նազ անունով:

Իսկ թամարը թէև շատ գեղեցիկ չէր, բայց խելացի և ճարպիկ կին էր: Ամուսնի մահից յետոյ նա երկար կարողացաւ կառավարել Մէլիք-Խորաշէլանների թողած մեծ ժառանգութիւնը և նրանց հպատակներին, որ այն ժամանակ գտնվում էին Գանձակի գաւառում: Յետոյ իր աղջկան, Սըհար-նազին, կնութեան տարով նախնիականցի Արի-բէկի որդի Սայի-բէկին, տիկին թամարը ընտրեց նրան իբրև անային փեսայ, և Մէլիք-Խորաշէլանների ժառանգութիւնը անցաւ այդ Սայի-բէկի ձեռքը, որը սկսեց այնուհետև կրել իր կնոջ անունը:

XXXIV

Մէլիք-Մէլիքում մահը գրկեց Ջաւադ-խանին իր լաւ դաշնակցից, իսկ Ղարաբաղը գրկեցաւ իր քաջ հայրենասիրից: Նա իր հետ գերեզման տարաւ աւելի ընդարձակ և հիմնաւոր ծրագրեր Ղարաբաղի մէլիքութիւնների վերականգնման մասին, որը բոլորովին տարբերում էր միւս մէլիքների և Յովսէփ արքեպիսկոպոսի զարգացմանից: Երբ միանգամ նրա ներկայակից Գալի-Մարտիան (Աւազ վարդապետը) համարձակվեցաւ յանդիմանել նրան թիֆլիսի աւերակ դարձնելու պատճառով, երիտասարդ մէլիքը դառնացած կերպով պատասխանեց նրան. բաւական խաբրեցանք... մինչև թէր պէտք է երազներով հրապարակեմ... մեր բա-

*) Այդ Եասակն չը գիտենք թիֆլիսի հայոց արաբականների տօմիցն էր:

բերանները մեզ կուեցնում են իրանց թշնամիների հետ, իսկ իրանք մէջանդից շահվում են... Մենք աւելի հաստատ պատճառներ ունենք հաւատարմ պարտեց Շահներին, քան թէ ուրիշներին: Շահ-Արաբը հաստատեց Ղարաբաղի մէլիքութիւնները, Նաղիբը վերահաստատեց, իսկ Աղա-Մամադ-խանը խոտտացել է ինչ աւելի, քան թէ իր նախորդները: *)

Ինչ էլ որ լինէր Աղա-Մամադ-խանի խոտտանքը, Մէլիք-Մէլիքումը այժմ նրանց օգուտը քան չէր կարող: Նրա թշնամիները՝ Խորաշէլանները և Հերանի իշխանը՝ աւելի լաւ էին հակահասում այդ բոլորը, և այդ էր պատճառը, որ մինչև Աղա-Մամադ-խանի կրկին վերադարձը, աշխատեցին Մէլիք-Մէլիքումին ունչացնելու:

Հերանի և Ղանգանարի պաշտպանութիւնները զգուցելով, Աղա-Մամադ-խանը վայելում էր իր յաղթութիւնների փառքը իր նոր անթուանիստ թէհրան քաղաքում, երբ Գանձակի Ջաւադ-խանից նամակ ստացաւ Սեղիվկիսում պատանի անցքերի մասին: Նամակագիրը տեղեկացնում էր նրան կոմս Ջուբովի արշաւանքների և խաների ուսաց հպատակութիւնը ընդունելու մասին, յետոյ կոմս Ջուբովի անակնկալ վերադարձի մասին դէպի Ռուսաստան, տեղեկացնում էր Հերանի իշխանի միտքանութեան մասին Խորաշէլանների հետ, և իր բերդը, Գանձակի, պաշտպանութեան մասին յիշեալ երկու դաշնակիցները, և վերջապէս Մէլիք-Մէլիքումի սպանման մասին, որը շատ սիրելի էր Շահին: Այդ բոլորը լսելով, Աղա-Մամադ-խանը 1797 թ.ի ամառը կատարեց մի նոր արշաւանք դէպի Անդղիզկա:

Կեռ նա Երասի գետից չէր անցած, Խորաշէլանները մեզ կարողում ենք, որ Աղա-Մամադ-խանը խոտտացել էր Մէլիք-Մէլիքումին, ոչ միայն Խորաշէլանին ունչացնելով բարձրացնել Ղարաբաղի մէլիքութիւնները, այլ և պիտի յանձնէր նրան և վրաստանի կառավարութիւնը:

խանը տեսնելով, որ չէ կարող ընդլիմարել պարտեց անազին զօրութեանը, և մասնաւոր յոյս չունենալով, որ հայոց մէլիքները այս անգամ ևս կօգնեն իրան Աղա-Մամադ-խանի դէմ, վերադարձ ընտանիքը, և գիշերով թողնելով Շուշի բերդը, փախաւ Բաղբաքան իր աներ Սմար-խանի մօտ:

Այդ ժամանակ հայոց մէլիքները նոյնպէս մեծ կրկնով մէջ ընկան: Նրանք դեռ Աղա-Մամադ-խանի առաջին արշաւանքի ժամանակ մերժել էին Շահի հրահրքը, սրով կուտւ էր նրանց ընդունել Պարսկաստանի հովանաւորութիւնը, խոտտանալով, ոչնչացնել Խորաշէլանին և վերահաստատել Աղա-Մամադ-խանի մէլիքները վաղմի իշխանութիւնը: Բայց մէլիքները այժման անխոնկ գտնվեցան, որ բունցին Խորաշէլանի կողմը, և որպէս տեսանք XXXIX գլխում, սկսեցին իրանց բոլոր ուժերով պաշտպանել նրան և Շուշի բերդը Շահի անազին զօրութեան դէմ: Իսկ այժմ ինչ պիտի անէին, երբ նոյն շահը աւելի ուժ պատրաստութեամբ յարձակվեցաւ Ղարաբաղի վրա:

Մէլիքների զօրքը իրանց ժողովուրդն էր, իսկ ժողովուրդը սկսել էր ցրիւ գալ, ոչ այնքան Աղա-Մամադ-խանի երկիւղից, որքան մի նոր և աւելի անդուք թշնամուց, որը այդ միջոցներում վրա հասաւ:—Կա էր Ղարաբաղի սարափելի սովը, որին հետեց ժանտախտը:

Մենք յետոյ ցոյց կը տանք, թէ սովը և ժանտախտը, խոտտանելով զարաբական տաղանայների հետ, որպիսի կործանիչ ներգործութիւն ունեցան Ղարաբաղի հայ իշխանութիւնների վրա, իսկ այժմ այդքանը կասեմք, որ մէլիքները որքան էլ ցանկանային, չէին կարող դէմ դնել Աղա-Մամադ-խանին, որովհետև նրանց ժողովուրդը այդ ժամանակ միայն հայի համար էր մտածում և վաղում էր դէպի այն կողմը, ուր կարող էր հաց գտնել: Կեռ Աղա-Մամադ-խանը չը հասած Շուշի բերդին, Մէլիք-Բէգլարեան Մէլիք-Արովը զնաց վրաստանի կողմը, իսկ Մէլիք-Շահնազարեան Մէլիք-Ջուռուզը կամենում էր գնալ թիֆլիս, (կը շարունակվի)

կեանք գրել հայերէն թարգմանութիւնը ձեռք բերելու համար պէտք է դիմել Մոսկվայ առաջ քահանայ Յակոբ Սուրբենացիին:

ՕՐԻՈՒԲԱՏԻՅ մեզ գրում են հետեւեալ: «Մեզ ժող կայ մի մեծագործ գործարան, որտեղ բանում են աղջիկներ, այրի կանայք և տղաներ: Պէտք է ասել որ այս գործարանը նիւթական կողմից շատ է օգնում մեր բնակիչներին ազատ դատաւարչին: Բայց ախտս որ գործարանի տէրը պ. Բարախանց, թող է տուել իր գործարանում մի փաստաբանին գրասենեակ (կանտոր) բաց անելու: Այդ գրասենեակը վաս ներգործութիւն ունի գործարանի երկու սեռի բանւորների բարոյականութեան վրա: Ցանկալի կը լինէր, եթէ պ. Բարախանց, չսակամալով իր արած սխալը, առաջարկէր իշխել փաստաբանին իր գործարանից տեղափոխել գրասենեակը մի այլ տեղ:»

Վաղը, հինգշաբթի օր, յունիսի 24-ին պ. Ներսիսեան կը սայ իր վերջին ներկայացումն Արծնու թատրոնում: Բացի մի քանի հետաքրքիր մեքենաների ցոյց տալուց պ. Ներսիսեան աւելացրել է իր պրօզայական դարձեալ մի քանի նոր ձեռագրութիւնները և նրանց գործողութեանց գաղտնիքի բացատրութիւնները:

ԱՐՏԱԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍԵՐԲԻԱ

Բէլգրադից մեզ ստուր լուրեր են հասնում, գրում է «Годосъ» լրագիրը: Սերբիական նոր թագաւորութիւնը ներկայումս քաղաքական ամենամեծական գրութեան մէջ է: Ժողովուրդը անբաւական է կառավարութիւնից, կառավարութիւնը անբաւական է ժողովուրդից: Քաղաքական և բարոյական նշանակութիւնը կորցրած Պրօզանացի մինիստրութիւնը շարունակում է կառավարել: Նոր մինիստրութեան կազմելը Նիկօլիչի նախագահութեամբ անկարելի եղաւ, սկուպիւնայի նիստերը չեն կայանում, որովհետեւ չէ լրանում օրէնքով պահանջած պատգամաւորների թիւը: Կառավարութեան ապօրինի վարմունքից վրդովված ընդդիմադրական կուսակցութիւնը չէ կամենում զիջումներ անել: Վերջապէս Սերբիայի պետական մեքենան անկարող է գործել:

Քանի որ Սերբիայի մէջ այդպիսի անկարգութիւններ են տիրում, Պրօզանացի մինիստրութիւնը կամենում է օգնել գործին սահմանափակելով մամուլի ազատութիւնը: Ողորմելի քաղաքագետները, որոնք Սերբիան Աւստրիային անձառուր արին, կամենում են ամրացնել իրանց դիրքը մամուլի ազատութիւնը սահմանափակելով: Երբ մեզ գրանցեցին նրանք անկարող են ասնել: Վիեննայի լրագիրները Բերլինից ստացված լուրերը հաղորդում էին, որ սերբիական կառավարութիւնը մտադիր էր պետական յեղափոխութիւն գործել: Եթէ այդ յեղափոխութիւնը նրանուհն է կայանում, որ կառավարութիւնը կամենում է անգոր գարձնել ընդդիմադրական լրագիրներին յարձակումները Սերբիայի անմիտ արտաքին քաղաքականութեան և տնտեսական ներքին քաղաքականութեան դէմ, ուրեմն այդպիսի յեղափոխութիւն կարող են գործել սերբիական Նապօլեօնները, որոնք չեն ամաչում ստոր միջոցների գործադրելուց ընդդիմադրականների դէմ: Առանց պետական յեղափոխութեան էլ այդ մարդիկ համարձակութիւն և ոյժ ունեցան տեղից զրկել ամբողջ ժողովուրդից սիրված հովուին, չը պատասխանել պատգամաւորների հարցերին պետական ֆինանսների գործադրութեան մասին, գիմել պօլիցիայի և ժամդարմների օգնութեանը կառավարչական կանդիդատին

ընտրելու համար և չը թողնել, որ պատգամաւորների ժողովին մանակցեն ժողովուրդից օրինաւոր ձանապարհով ընտրած նրա անդամները: Միայն թէ օրէնք չը կար սահմանադրութեամբ պահպանել մամուլի ազատութիւնը սահմանափակելու համար, իսկ այդ ազատութիւնը, չը նայելով կառավարութեան գործադրած ստոր միջոցներին, մի ուժեղ զէնք էր ընդդիմադրականների ձեռքին ժողովուրդին առելի մինիստրների դէմ մաքաւելու համար: Բէլգրադից ստացված հեռագիրը հաղորդում է, որ ներքին գործերի մինիստր Գարաշանին Միլան թագաւորի հրամանով յանձնարարված է սկուպիւնային մի օրինագիծ ներկայացնել մամուլի ազատութիւնը սահմանափակելու համար: Ա Օ Ղ Ղ

Գործերի գրութիւնը Սերբիայի մէջ ներկայումս այնպէս է, որ մինիստրութիւնը ստիպված է ոչ թէ միայն մաքաւել ընդդիմադրականների դէմ սկուպիւնային մէջ, այլ և ժողովուրդի դէմ, որ չէ կամենում համբերել Պրօզանացի մինիստրութեան ղեկավարութիւնը: Վերջին ընտրութիւնների ժամանակ ժողովուրդը շատ տեղերում բռնաբար էր կառավարչական գործակատարների վրա, որոնք խօսում էին ժողովուրդի ընտրելիների դէմ: Պօլիցիայի օգնութեամբ ընտրված պատգամաւորները վախենում են օգնուիլ իրանց իրաւունքները, որպէս զի չը կորցնեն իրանց շարժական և անշարժ կայքերը: Նրանցից մի քանիսից ժողովուրդը պահանջեց միանալ ընդդիմադրական կուսակցութեան հետ, սպառնալով, որ հակառակ դէպքում նրանց կայքերը կայրվին: Այդպիսով մինիստրութեան մի շարք բռնի գործողութիւնները առիթ տուին և ժողովուրդին զիմել բռնի միջոցներով: Դժուար չէ երևակայել թէ դա ինչ հետևանքներ կունենայ Սերբիայի համար:

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻՍՏԻՅ

Տրապիզոն, 16 յունիսի

Առջի նամակովս դէպի թիւրքաց Հայաստան գնացող փառանքու և ճիւղիկներու վրայ խօսած ամենա մտազայ ինչևէ մերթ Հայաստան գնացող պօլիցիայի հոսոս վարժապետները: Ասոնք ալ գրեթէ վերոյիշեցնելու պէս մի փառ տպաւորութիւն կը ձգեն դիտողին վրայ: Նոցա գուշտու դէպքին վրայ մի անգամ նայողը կրնայ հասկնալ թէ նոցա մարմնուց մէջ որչափ տկար հողի մը կը բնակի: Առաջ միտքը ձգնք, առողջ մարմնով գրեթէ և ոչ մէկ ուսուցչէ անցած է դէպի վեր: Ասոնք քով միայն լեզու մը կայ որ կը պլպլայ և այն ալ յիսար կերպով և ուրիշ ոչինչ: Ինչ կրնայ յուսալ նայ ժողովուրդը այս տեսակ ուսուցիչներէ: Գէպի Հայաստան գնացողներէ ոչինչ միտքաւորութիւն չը կայ մեզ ֆիլմով Հայաստանէն եկողներուն վիճակը բարբառելու, կարելի է անտեց մէջ պղտիկ միտքաւորութիւն մը կրնանք գտնել:

Ուրեմն նայեց զարձակ լրագրումս ճանապարհը: Ան հետուին փոյնի բարձրացաւ, մտառացաւ բազմութիւնը... Վայ մեր պէքերուն, փոչիկ և ցեխի մէջ շաղխուած հայ դիւղայիներու խումբ մ'է այդ, որոնք իրենց ընտանիքը և հայրենի երկիրը թողած, կը զաղթեն ստաբրիկ: Այն, ստաբրիկ, ջարդուած և արեւելուայ ոտքեր շատ եմ տեսել: Վայ այն հայու աչքերուն որ հայ գիւղացու ոտքը և այն ոտքը, որուն վրայ պիտի կանգնի սպառնայ հայութիւնը: Ապագայ հայութեան ոտքը արեւելուայ կը տեսնենք և ինչ կրնանք: Ոտքերը կտորվելէն վերջը ինչպէս կարելի է կանգնել:

Հարցնեք մեք մեզի ով է հայութեան պատական տարրը, — երկրագործ ժողովուրդը, գաղթականութեան այս ազգակործան վիճակի դատապարտողը: Հաստատուելով «Մշակի» և Պօլսոյ թղթակից Մ. Վ. ի կարծիքը պիտի բռն նայ իսկ հպերն են գաղթականութեան պատճառը,

այսինքն հայ-վախառուները: Ես այս ստուգած եմ շատ մը հայ մշակներ: Բոլորովին համարձեւ եմ ձեր և Պօլսոյ թղթակիցին և կը կրկնեմ նորա առաջարկած միջոցները:

Հայաստան գնացողներէն յայտ չը կայ, եկողներէն յուսահատութիւն կայ, և Տրապիզոնէն Հայաստանի համար ուրիշ լուր չը կայ:

Կը հազարեմ մի նոր լուր ալ: Կրնն թէ թիւրքաց կառավարութեանը երկու առաջարկ եղած է Հայաստանի մէջ երկաթուղու մը գիծ անցունելու: Առաջարկողներէն մին աւստրիացի Հիլը անունով մէկ մ'է, երկրորդը՝ հայ մ'է Գարաշանց: Հան ազգանունով: Երկուսէն ում պիտի տրուի երկաթուղու գործը աշտղվելու է թէ ոչ: — Գեուս գուշակը կարելի չէ Կրնն թէ մտադրված երկաթուղու գիծը անցնելու է Տրապիզոն, Էրզրում, Վան և Մուշ: Ամենին երաշխաւոր չեմ այդ լուրին համար: ***

ԱՐՏԱԲԻՆ ԼՈՒՐԵՐ

Գերմանական ընկաւտագի սէսիան, ինչպէս երևում է, մինիստրական ճգնաժամով պէտք է վերջանայ: «Kreuzzeitung» լրագրի խօսքերով, ֆինանսների մինիստր Ֆոն-Բիտտեր հրատարակեց տուեց և կայսրը ընդունեց նրա հրատարակածը: Իշխան Բիտտերի մեղադրում է մինիստրին այն բանում, որ նա չը կարողացաւ լանդտագում ընդունել տալ կայսերական եկամուտները բաժանելու օրէնքը դաշնակցութեան պետութիւնների մէջ: Նրա յաջորդ անունում են պետական բարտուղար Շօլցին: Լանդտագում ընտրութիւններ կանն սեպտեմբերին: Այդ ընտրութիւնները կի՛ն բարեյայտ հետևանքներ կունենան, օրինակ, կի՛ն լանդտագը կրնուի կայսերական եկամուտների աւելորդ բաժանելու մասին օրէնքը, այն ժամանակ սպասում են, որ իշխան Բիտտերը հարկերի նոր օրինագիծը կառաջարկի: Իսկ եթէ ընկաւտագը կրկին կը մարժի այդ օրէնքները, այն ժամանակ ընկաւտագը կրկին կարձակվի:

«Köln. Zeitung» լրագրին Բերլինից հաղորդում են յունիսի 19-ից, որ նախընթաց օրը Բրեմենում կայացաւ պրօզերսիտների կուսակցութեան ընդհանուր ժողովը, ուր Եւսէն Ռիխտեր պատգամաւորը ճառ խօսեց 3,000 անձանց առաջ: Ընդհանուր ժողովին ներկայ էին կուսակցութեան 80 պատգամաւորներ, որոնք երեք վճիռներ ընդունեցին: Այդ վճիռներից առաջինով հասանութիւն է արվում կուսակցութեան պատգամաւորների գործողութեան եղանակին ընկաւտագում, այսինքն, որ նրանք համաձայնութիւն չը տուին կայսերական նոր հարկեր մտցնելուն, երկրորդ վճիռով պատգամաւորները անհրաժեշտ են համարում ներկայ ժամանակում արդէն պատրաստութիւններ տեսնել, աչքի առաջ աւնեանալով սեպտեմբեր ամսին պրոտական լանդտագում լինելու ընտրութիւնները: Երրորդ վճիռը պահանջում է, որ ընտրական դաշնակցութիւններ կազմակերպվեն, դրամական միջոցներ հաւաքվեն և առհասարակ եռամսեայ միջոցներ գործ դնեն պատրաստ լինելու համար այն վճիռողական կուսին, որ լինելու է սահմանադրական իրաւունքի և զիլլատատրայի մէջ: Մի և նոյն օրը ազատամիտ պատգամաւորների ժողով կայացաւ Գրեզելներում և ճանրել խօսեցին Կարլ Բրաուն, Մօսկի և Ռիլիէյմ, որոնք պետութեամբ ընդունվեցան 2,000 հոգուց աւելի բազմացած ժողովը: Վճիռված է, ազգային ազատամիտներից ընտրված պատգամաւորներից, ընտրողական դաշնակցութիւնից և պրօզերսիտներից մի մասնաժողով կազմել, որը պէտք է աշխատէ միջոցներ գտնել յաղթութիւնների տալու համար ազատամիտ կուսակցութիւնների ներկայացուցիչներին Սակսոնիայում:

Լրագիրներին Լօնդօնից հաղորդում են յունիսի 19-ից, որ զէնքերի և պատերազմական պայարների պահեստներ մէնակ Լօնդօնում չեն գտնվել, այլ նոյնպէս կօրկում և իրլանդական շատ ուրիշ քաղաքներում: Պօլիցիան գտաւ, որ ֆինիսները դիտաւորութիւն ունեին մեծամասնակ ճորդները նշանաւոր հաստատական շինութիւնները Լօնդօնում: Մանչեստրում և Լիլիքլայում, և հասարակութեան այդ իրարանցումի բուլեից օգուտ քաղել յեղափոխութիւն սկսելու համար իրլանդիայում Պօլիցիայի հսկողութեան շնորհիւ, այդ նախադիւր քանդվեցաւ, և իրլանդիայում անհրաժեշտ պատրաստութիւններ են տեսնված ամեն տեսակ պատահարների դէմ: Զօրքերի մէջ այնպիսի խիտ կարգապահութիւն է մտցրած, կարծես թէ նրանք թշնամու երկրում լինելին պատերազմի ժամանակ և ամեն պատրաստութիւններ են տեսնված զօրքերին դէպի արշաւանք ուղարկելու համար:

Լրագիրները հաղորդում են, որ յունիսի 10-ին Գլենուայում կատարվեցաւ Մաձձիլիի արձանի բացման հանդէսը:

«Standard» լրագրին Բերլինից հեռագրում են, որ իշխան Բիտտեր և կոմս Կարնօլի ներկայ կը լինեն այն տեսակցութեանը, որ այս տարի կը կայանայ Իշխան Գերմանական և աւստրիական կայսրների մէջ:

Վիեննայի լրագիրներին խօսքերով, Չէրնօօ-րիայի իշխան Նիկօլայ սերբերէն լեզուով ուսուցանողներով երեք գործողութեամբ մէկ դրամա գրեց «Բալկանեան լեռների իշխանուհի» վերնագրով: Իշխանը դիտաւորութիւն ունի այդ դրաման ֆրանսերէն թարգմանել տալ:

«Daily News» լրագրին Լիտաւոնից հաղորդում են, որ Վասիլօ-ճե-Պաւս գրահակիր նաւը հրաման ստացաւ անյապաղ լողալ դէպի Երկրորդ ստա պօրտուգալեան հպատակների կեանքը և շահերը պաշտպանելու համար:

ԻՍԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Երկու կանանց անձնասպանութեան մասին լրագիրները հաղորդում են հետեւեալ մանրամասնութիւնները այդ անձնասպանութեան մասին, որ այնքան մեծ աղուով հանեց Վիեննայում: Զոհերից մէկը, օրիորդ Մարիա Գամլին-Պալմօն, 17 տարեկան մի քանի ամիս առաջ թողեց Փարիզ, և եկաւ Վիեննա վիեննայի երկաթուղու արխաւոյրատ կոմս Հէնրի Կուրնօլի տեղից, որից արդէն երկուսու տեսէր: Նրա և կոմսի մէջ յարաբերութիւնները կտրվեցան շատով այն համազամանքից յետոյ, երբ աղջիկը, իր ընկերուհու, օրիորդ Ալիսա Ռէննօլիի հետ միասին Վիեննա եկաւ: Նրանք երկուսն ևս երբեքուս ասպարէզ էին ընտրել և երաժշտութեան դասեր կու տալու: Անձնասպանութիւնը կատարվեցաւ Օտտօն-Նէյմ ամբողջ պարկուտ, երկուսուսուր կոմսի պատահանների առաջ: Երկու ընկերուհիներն ևս մի քանի փորձեր արեցին կոմսի հետ բանակցելու համար: Երկուսուսուր կոմսի հայրը շատ վշտացած էր այդ անձնասպանութեամբ. նա յայտնեց, որ կի՛ն կարողանար այդ ցաւալի դէպքում յանձնատեսնել, նա կը սպիպեր իր որդուն ամեն բան անել այդ թշուառութեան առաջն աւնելու համար: Երկու ընկերուհիների բնակարանում սե կնքով կնքված մէկ արկղ գտնվեցաւ, որ պարունակում էր համագրեցանքների վերջին նամակները: Օրիորդ Ալիսա Ռէննօլիի մի նամակը հետեւեալ բովանդակութեանն ունէր. «Միանով Աստուծու և մարդկանց առաջ Մարիային ազատում են պատանդանատութիւնից իմ անձնասպանութեան համար: Իմ դէպի նրան ունեցած մտերմութիւնը յախտեանական և անսահման էր: Ես երգիչից հետեւ նրան, ուր որ նա կերթար: Մահը չէ կարող ազդանել ինձ այդ երգուցից: Ինչ որ վերաբերում է օրիորդ Գամլին-Պալմօնի նամակներին, նրանցից մէկը ուղղված էր իր փաստարան Սիլային և վերաբերում էր իր զուակի կրթութեանը, իսկ միւսը ուղղված էր իր մօրը: Բացի դրանից, արկղում գտնվեցաւ խոստովանութեան պէս մի բան, որի մէջ նկարագրված է Մարի Գամլինի և կոմս Հէնրի Կուրնօլի մէջ եղած սիրային յարաբերութիւնների կարճ պատմութիւնը: Եւս պարարկում եմ կոմս Հէնրիկին, — ասում է օրիորդ Գամլին, — նրա իմ վերաբերութեամբ վարմունքի համար: Նրա առաջին յանցանքը այն է, որ սեպտեմբերին, երբ ես ազատվել էի նրան թող տալ ինձ հրամայա վերադառնալ, եթէ նա չէ կարող օգնել ինձ այն փորձութեան մէջ, որ ինձ հետ պատահելու էր, նա մերժեց իմ այդ խնդրքը: Նա պատասխանեց ինձ, Գուս իրաւունք չունեն թողնել ինձ, որովհետեւ ես քո զուակի հայրն եմ, ևս քեզ երբէք չեմ թողնի: Մեր զուակը մեզ ընդ միշտ կապող կապն է: Ես կը պատակով քեզ հետ: Այն ժամանակ ես պարտաւորվեցաւ համարեցի մնալ: Ես կարծում էի, որ նա կամենում է կատարել իր պարտքը իր զուակի մօր վերաբերութեամբ: Վերջը հանկուցայ, որ նա միայն աշխատում էր աւելի երկար պահպանել իր ժողկնջը: Երգվում եմ, որ ճամբարի է ասածս: Նուսով դրանից յետոյ նա դուռն էր ինձ, ի միջի այլոց, հետեւալ: Եւս շատ ուրախ եմ, որ կարող գտնում եմ մի քանի խօսքեր գրել կար իրիվարելու համար քո դրութեան մէջ... Եթէ ճակատագիրը չի թող տայ մեզ պակով միասնալ, այն ժամանակ մեզ միշտ կը միացնէ

սերը... ևս կը կարողանամ տալ քեզ այն...
 ինչ որ ազնուութիւնը և կրօնը պահանջում են
 ազամարդից, այսինքն, բարորութիւն մօր և դա-
 ւակի համար... Ես պարտաւոր եմ ամեն բան ա-
 նել ըստ պահանջի ապահովելու համար, որքան
 կը ներքին իմ միջոցներս կըրկուսն քեզ այդ բա-
 նում, տալիս եմ քեզ ազնուականի և ապագայ
 սպայի իմ ազնու խօսքը: Այդ նամակը, որ ըս-
 ձեռքում կը մնայ, կը ծառայի որպէս զօկումնե-
 տային ապացոյց: Այդ նամակը ուրիշ շատե-
 ըի հետ կը գտնուի իմ թղթերի մէջ: Անպ-
 տեմերք ամեն նա իր հօր մօտ վերադարձաւ:
 Ես այն ժամանակ մտնում էի Կեօրլինգում, և շատ
 դժբաղդ էի: Ստիպուեցայ ծանել ամենը, ինչ որ
 ունէի, մինչև անգամ դիտարկեցաւ: Այն ժամա-
 նակ ես խնդրեցի նրան գիտել իր հօրը և օգնու-
 թիւն ինչո՞րով: Ահա թէ ինչ պատասխանեց նա
 ինձ. «Սիրելի, «Միտի», ես ստացայ ըստ հրա-
 շարի նամակը, դա ցոյց է տալիս, որ դու դեռ
 ես սիրում ես ինձ: Գէ, էլ ինչ ասեմ քեզ: Ան,
 այո, իմ սիրելի ձին հրամարդացաւ: Ես դեռ էլի
 յոյսս չէի կորցնում, բայց ինչպէս երևում էր,
 իդուր, նա սկսեց հետել իր հօրից հեռագրով
 ստացած հրահանգներին, որ պարտաւորում էին
 հետեւել խօսքերը: Ամեն բան խոտաւալ և
 ոչինչ չէ տալ: Առանց Ալիսայի օգնութեան ես
 սարսափելի աղքատութեան մէջ կընկնէի: Ես
 զարմանում եմ, որ կոմս Ֆրանց, որի մեծահար-
 թիւնը ամենքը գովում են, այդքան խոտաւորտ
 գտնուեցաւ ղեպի իր որդու դաւակ: Գեռ, այդ
 ընչ էր. Կեօրլինգում կոմս Ֆրանցը բանը այն-
 պէս սարքեց, որ ես կանչվեցայ պոլիցիական կօ-
 միսարի մօտ, որը ինձ հետ շատ կոպտութեամբ
 վարվեց և վերադարձեց ինձ: Ապա ինձ մօտ ու-
 ղարկեցին Կանչալեյներին, որը ինձ չորս հազար
 Ֆլորին առաջարկեց, եթէ ես կը համաձայնվում
 գրաւոր կերպով յայտնել, որ կոմս Հէնրի իմ դա-
 ւակի հայրը չէ: Ես զղումով մտքով այդ ա-
 ռաջարկութիւնը: Ես Ֆրանցին ուղերգիցայ
 Ալիսայի նամակ ստացայ, որի մէջ Հէնրիին
 գրում էր ինձ, թէ իրան համար անկարելի է մա-
 նուկին իրաւաբանօրէն ճանաչել: Ես դառն չէի
 սկսում որդու ծննդեան մասին, որովհետեւ Հէն-
 րին գրում էր ինձ, որ իր հայրը արդէն համա-
 ձայնվում է բանը սարքել: Բայց յանկարծ նա
 սկսեց Կանչալեյներին առաջարկութեան նման,
 ինչո՞րով որ համաձայնութիւն կայացնենք, այսին-
 քն մէկ որոշ դրամական դրամարով ես պարտա-
 ւոր էի հրաժարվել այն բանից, որ մամուլը Հէն-
 րի որդին է: Ես չը կարողացայ տանել այդ վե-
 ընաւորանքը: Եթէ ես մարդկանց դժարատութեանը
 դիմելի, օգնութիւն կը գտնեի: Ես այդ բանը
 չեմ անում, որովհետեւ ինձ համար ամօթ է կատ-
 առվում, որ ես սիրեցի մէկ այնպիսի մար-
 դու, որ արժանի չէր ինձ: Ես այլ ես ոչ ոք չու-
 նեմ ապրելու, և բախտաւոր եմ նրանով, որ իմ
 առջադրանքին վերջ դնելու համար ունեմ: Ալի-
 սան, որը իմ հաստատարի բարեկամն էր և տանջ-
 վում էր ինձ հետ միասին, մաշի առաջին ես չի
 թողնի ինձ: Ես ամեն ջանք գործ դրի համարելու
 համար նրան, որ անձնասպանութիւն չը դրժի,
 բայց նա աշխարհում ամենից առաւել սիրում է
 ինձ, և կամենում է ինձ հետ միասին մնանել:
 Մենք խնդրում ենք, որ մեզ միասին վիճակում
 թաղեն:

բանախոսներին, աւաղանները սկսեցին դուռը
 բաղնիկ մի քանի բազմաթիւ յետոյ դռները բաց-
 վեցան և նրանք ներս մտան: Կատաստանական
 քննութիւնից երեսայ, որ այդպիսի օրինակելի
 անասութիւնը մօտ մէկ տարի շարունակվում էր:
 Կողմնակիցները կատարվում էին չը լաված
 յանդգնութեամբ և ոչ զբի գլխում չէր մտնում
 աւաղաններին բանտի մէջ օրոնել:

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
 ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ
 Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 21 յունիսի: Պետական
 բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ
 94 ռ., երկրորդ 90 ռ. 50 կ., երրորդ
 90 ռ. 62 1/2 կ., չորրորդ 90 ռ. 37 կ., հին-
 գերորդ 90 ռ., ներքին 5% առաջին փոխա-
 ութեան տոմսակը արժէ 220 ռ. 25 կ.,
 երկրորդ 211 ռ. 50 կ., արեւելեան առաջին
 փոխառութեան տոմսակը արժէ 89 ռ. 50 կ.,
 երկրորդ 89 ռ. 12 կ., երրորդ 89 ռ. 25 կ.,
 ոսկի 8 ռ. 28 կ.: Ռուսաց 1 ռ. 1օնգօնի
 վրա արժէ 24,09 պէս, ռուսաց 100 ռ.
 Համբուրգի վրա արժէ 206 մարկ 12 պֆ.,
 ֆարիզի վրա արժէ 252 ֆրանկ 75 1/2 սան-
 տիմ: Բորսայի արամագրութիւնը ամուր է:

Խմբագիր—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՇԵՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ТЕХНИК принимает работы: по
 механическому делу, производству
 чертежей на проекты построек. Так-
 же желает иметь место на заводѣ
 или фабрике, подходящих к спе-
 циальности.

Стар. Арсенальная д. № 28. Н.
 С. П.
 ՏԵԽՆԻԿ ընդունում է աշխատանքներ մե-
 քանիկական գործերի մէջ, ընդունում է
 պատուէրներ գծագրներ և շինութիւնների
 պրոէկտներ պատրաստելու, պատրաստ է
 պաշտօն ընդունել մի գործարանի կամ ֆաբ-
 ռիկայի մէջ իր մասնագիտութեանը յարմար:
 Հասցէն վերեւ կարգաչէք:
 2—4

**ԻՐԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ-
 ՆԵԱԿ.** Գորովնակի պրոպագանդի վրա,
 տուն ճարտարապետ Բէյօի: Գրասենակը
 բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3
 ժամը կես օրից յետոյ և երեկոյան 7—
 10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրե-
 լից և մեծ տօներից:

Ներսիսեան դպրանոցի բարձր դասա-
 տան աշակերտներից մինը կամենում է պա-
 տրաստել աշակերտներ և աշա-
 կերտուհիներ՝ բոլոր Հայ դպրոցների
 ստորին և միջին դաստանց համար: Ցան-
 կայողք թող դիմեն Երվանդի կարվան-
 սարայում պ. Գրիգոր Կահեանի խանութը
 № 1.
 Խոնարհաբար խնդրում են ԵՐԵՒԱՆԻ պա-
 տուելի պարոններին, տիկիներին և օրորդ-
 ներին, որոնք ՊԱՐՏ են մնում մեր ԽԱՆՈՒ-
 ԹԻՆ, վճարել իրանց պարտքը մինչև յուլիս
 ամսի 1-ը: Հակարակ դէպքում ստիպված
 կը հրատարակեմ առանձին յայտարարու-
 թեամբ նրանց անուններն ու ազգանուն-
 ները:
 Գեորգ ԽԱՆԱՋԱՏԱՆՑ

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՌԻՍԱՆՈՂ, որ այժմ
 արդէն Մանգլիսումն է ապրում, յանձն է
 առնում պարագայ երեկանների հետ թէ
 արքունական և թէ հայոց ուսումնարան-
 ների աշակերտների և աշակերտուհիների
 հետ:

Պայմանները կարելի է առաջարկել հե-
 տեւեալ հասցեով. Манглись, Габриэль
 Мирзоевъ, въ рошѣ, дача Марѳы
 Тимофеевой.

Въ Редакціи газеты
«МШАКЪ»
 Продается
 БРОШЮРА
 «ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ
 ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.»
 Д. Григорія АРЦРУНИ.
 Брошюра напечатана въ Москвѣ.
 Цѣна 25 коп.

«ԿՐԿՆԱԿԻ ԻՏԱԼԱԿԱՆ ՀԱՇՈՒԱԳԱՀՈՒԹԻՒՆ»
 ԱՆՈՒՆՈՎ ԳՐԻՑՅՈՒ ԲԱԺԱՆՈՐԿՆԵՐԻՆ.
 Խնդրում ենք այն անձինքներից թէ բա-
 ղու և թէ այլ քաղաքներ, որոնց մօտ
 գտանվում են այդ գրքոյի բաժանորդական
 թերթեր մինչև Յունիսի 20-ը մեզ հասցնել:

Թերթերը պիտի ուղարկուին ուղղակի իմ
 հասցեին. Баку, «Россійскій магазинъ»,
 Абаду Апресянцу. Մինչև Յունիսի վեր-
 ջը մեզ ուղարկած բաժանորդական թեր-
 թերի մասին մի երկրորդ նամակաւ մեզ
 տեղեկութիւն տալ խնդրում ենք ուղարկող
 պարոններից, երկու թերթ մեզանում պա-
 կաս լինելուն առթիւ:

Բաժանորդներին յանձնելի գրքերը արդէն
 սպազորութեան տակ են փոխվում:

Հրատարակիչ—Աբէլ Ապրեսյանց.

ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԽՈՍԱՐԳ ԿԱՄԵՆՈՒՄ
 Է ՏԱՌՈՅ ԴԱՆԵԼ ՄԻ ՏԱՆ ՄԵՋ ԹԻՖԼԻՍՈՒՄ
 ԿԱՄ ԹԻՖԼԻՍԻՑ ԴՈՒՐԱ:

Նախապատուով է հայերի մօտ ծառայել:
 Հասցէն թողնել, Մշակի խմբագրութեան
 մէջ:

5—5

Միջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. վիճակներ ՄԵՐԵԼ, ամե-
 նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ կրԱՎԱԹՆԵՐ 8—30 ռ., շա-
 մադաններ 250—25 ռ., սակվորմներ 1. 30—12 ռ., սուռն դուռնի և քա-
 նապարհի 6—35 ռ., մարմններ (погребцы) 6—25 ռ., սամօ կարնի և քա-
 60 կ.—1.25 ֆունտը, կուխօնի պրոնէ ամաններ, Գեթմանիայի երկաթէ համով
 ամաններ. ու մի վալնի կնիք Դրամօրնի 38 ռ.—75 ռ., հրացաններ
 երկու լույնի 6—32 ռ., ռէվոլվերներ ամենայն տեսակ 3. 50—30
 ռ., պատրոններ (գուլաններ) ըէվոլվերի, սիգար Բէնգարդի ֆարիկից պապի-
 ռոս և թամբաքու կուշնարովի զիլի պապրոզի 5,000 ՅՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՐ.
 ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկիտ. (սուխար չայու և կահէի) լինէմի. կօֆէ կինէմի և
 Միլէյսօնի. Պետերբուրգու 40—1 ռ. 25 կ. հայերիներ ամենայն տեսակ
 28 կ.—240 ռ., պրոբկայ զինէվաճառների, հանքային և դարեջրի (ДЛЯ
 зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пучкъ), պղնձների սամովարի և
 չայու, դանակ չանդալ գանազան ֆարիկաների 1 ռ. 20 կ.—25 ռ. դուժիւր.
 գրչակիցի 1 ռ. 80 կ.—5—60 կ. դանակ ջիլի 1—60 կ.—12 ռ., դա-
 նակ հացի 20 կ.—1 ռ., հատը, կուխանի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր-
 միս կարելու մաշիւայ. Անգլիական ութներ, Բրիտանական չայիկներ, կահէի-
 նիկներ ամենայն տեսակ, ջարացներ կահէի համար, ֆիլտեր—Չուր մաքրելու,
 կրամալ կարթիկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ծակից, թուղթ փոշոյի, կանպրո-
 ներ, սուրբուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակիթ, քարտասկասակ, թանաք,
 թանաքամաններ, պրեսպապիներ, գրչակներ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի
 և բրիտանական դուժիւր 1—50 կ. մինչև 12 ռ., և չայու 45 կ.—5 ռ., չու-
 միլէք 45 կ.—5 ռ., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ռ. Չուխտ, պղ-
 սապրկաններ վարչակու, Ռեյնի ԿԱՎՈՆԵՐԻ, ամեն տեսակ, գուլթաններ կա-
 նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Չուխտ, շապիկներ, մարդկերանց զայուս-
 տիկներ, դոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրեկի և ջրի, սանդղի ջիլ-
 մայու ոսկորէ, գուտապիլիտի և փայտէ, շոտկաներ գլխի, շոլի, սապիլի, պոլի և
 կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօժի և շալէ (парусь) ֆէլ-
 շալէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիսաներ, պապրոսի ամաններ
 և մանր գործանորդների ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.—30 կ.
 կտոր, հոտափա ջրեր, պոլիթ, Գլիցերին ջրի քացախ, հոտափա պարաշոններ
 ԿԻՒՆԻՑԻ ԱՐՔՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:
 Վաճառականներին առանձին պայմաններով և զեղումով վերցնելու ապ-
 րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՐՏԵԼԻ ՏԵՐ ՆԻԿՈՂՈՒ-
 ՍԵՆԱՆԻ պահեստում. (ВЪ СКЛАДѢ) միջի փողոցում կաթօլիկաց փողոցի ան-
 կիւնում № 13.
 Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետեւեալ հասցեով. Тиблись Ми-
 хаилу Н. Теръ-Никогосову.
 77—180

Միջի փողոց, Կաթօլիչէսկայա փողոցի անկիւն № 13.

ԼՈՅՍ ՏԵՍՍԻ
 Ժ Օ Ր Ժ Ս Ա Ն Ի
ՎԱՐԳԱԳՈՅՆ ԱՄՊ
 Մանկական վեպը:
 Ծախվում է ի նպաստ մի չքաւուր
 աշակերտի կենտրոնական և կոմ-
 կասեան գրախանութներում:
 Գինն է 25 կ.:
 4—10

ՍՏԱՅՎԱԾ Է գրելու թուղթ առա-
 ջին տեսակի 4 ռ. 50 կ. օգման, բրինձ 6,
 8 և 9 կ. ֆունտը, խինայի զինի ջերմի
 դէմ 1 ռ. 40 կ. շերտ, փոշի տարափոփիկ
 հիւանդութեան դէմ, լուացքի և սամվար
 սրբելու համար: ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱ-
 ՆՈՒԹԻ ՄԵՋ ԱՐՇԵՐՈՒՆՈՒ
 ԳԱԼԵՐԷՑ: Նոյն տեղը լէպեօշկաներ,
 ցիտրոս և շերտու ծարաւի դէմ: Ծածկոց-
 ներ 4 ռ., շօկոյաղ երկու բաժակի համար
 5 կոպէկ: Երկաթէ մահաճականներ 8 ռ. և
 այլն: